

չե որ զերդաստանի հայրը խոստանում է հաշտուել բաժանուած հարսի հետ և նրան կրկին իր մօտն առնել.

Տաւարի-դովլաթ.—Ուզունլար մի զիշեր մի հարս իւր սկիսրոջ հետ միասին տանը առանց տղամարդի մնալով դրանքը կտպաւմ են և կրակի տառաջ լուռ ու մունջ նստում։ Մէկ էլ յանկարձ դռնից մինը բարակ ձայնով կանչել է, որ դուռը բահան։ Հարսը գուրս է եկել և տեսել մի սաստիկ մազոտ մարդ՝ կանդած։ Հարցնում է, թէ ով ես. Թէ մի մարդ եմ, էկի, եկել եմ. Հարսը վախեցած ներս է քաշում, մարդն էլ նրա յետեխց զնում և օջախի մօտ նստում է. բերում նրա առաջ հաց են զնում, սա սկսում է ուտել։ Ուտում է ուտում, բայց հացը շի պակասում։ Մարդը անխօս սրբում է բերանը և յետ նստում։ Այս ժամանակ սկսուրը վերցնում է ճրադը և հարսի հետ գնում են օդան, որ այդ մարդու համար անկողին պատրաստեն՝ քնի։ Այս մարդն էլ սրանց հետեւում է, հարսը անկողինը ձգում է, մէկ էլ յետ են նայում որ մարդ շկայ։ Նոր են հասկանում, որ սա տաւարի զովլաթն է եղել։

Դոմաթ.—Սոզոմոն իմաստունը մի նախիրի մօտից. անցնելիս ասում է, թէ այս ինչ կողի սրովայնի հորթի ճակատը ծաղկաւոր (դաշղա) է։ Նախրապանը պատասխանում է թէ չէ, պոշն է ծաղկաւոր, որ զրել է ճակատին, այդպէս է երեւում։ Սոզոմոնը մորթել է տալիս կողը և տեսնելով, որ նախրապանի ասածն էր ճիշտ, հարցնում է, թէ ինչի՞ այդքան իմաստուն տեղովը նախրապան է մնացել. նա էլ պատասխանել է, թէ իմ զմամթո է այսպէս. իմ ծննդեան ժամանակ իմ զմամթի զոշը (խոյ) ոտքը տարել պոզերն է քերել, դրա համար էլ ես չոր չորացել եմ, այն ինչ քո ժամանակը՝ դըմակն է քերել։

Բ.

ԶԱՐ ՈՒԽԵՐ.

Սաստանամեր.—Արանց զլխաւորը համարւում է Բելիարը, որի որդին կոչւում է Սաթիել, իսկ աղջիկը՝ նարմազուշիկ։ Սրանց մասին պատմում են.

Ա.

Երբ Քրիստոսի մայրն ու մօրաբայրը (Եղիսարէլի) Փրկչի զերեզմանի վրայ ողբում էին՝ զլուկաները քաշ ձգած և տռանց շուրջը նալելու, սատանաները, որ մինչև այդ ժամանակ մարդկանց մէջն էին ապրում և նկատելի էին, կամննալով սրանց ուշը ուրիշ բանի վրայ դարձնել, որպէսզի մռանան Տիրոջը, պարկերի մէջ պղնձէ ամաններ էին ածել և նրանց տռաշ կանգնել թշրիկը ըսկացնում էին:

Սուսաւծածինը յետ է նայել և տեսնելով սատանաներին՝ անիծել է, թէ «աներեսովթք բլլիք», և այդ օրուանից նրանք աներենոյթացել են, այլևս մարդկանց չեն հրետմ:

Բ.

Մի անգամ մի սատանայ պատահելով Կարփեցի մի արքատի, առաջարկում է նրան, թէ ես քեզ կը հարստացնեմ, եթէ քո, ինո՞չ և երեխաներիդ հոգին ինձ տաս: Ազրատը ասում է, թէ սպասիր գնամ կնոջը հարցնեմ, տեսնեմ ինչ կասի: Դնում կնոջը հարցնում է, կինն ասում է. Լաւ, հաձայն եմ, միայն այն պայմանով, որ մեր «ամէն ծուռը դրսակ»: Ազրատը գալիս գտնում է սատանային և պայմանը կապում:

Այնուհետև սատանան սկսում է որանց պէտքերը հոգալ. ահազին հարստութիւն է տալիս, զուարճութիւններ է պատճառում: Մի օր Էլ, երբ իւր կարծիքով, ամէն ինչ արած, կատարած էր համարում, սատանան ինքնազոհութեամբ հարցնում է կնոջը, թէ էլ բան շունիք ծուռը՝ դդիմ: Կինը մի մաղ է հանում գլխից և տալիս, թէ դզիք: Սատանան առնում զնում է մազը և երկար չարշարուելուց յետոյ ուղղում, բերում տալիս կնոջը հարցնելով:

«Եյդ մէկն էր, թէ էլի կայ»:

— Ինչպէս չէ, մի ամբողջ խուրց, պատասխանում է կինը:

Այս որ լսում է սատանան, իսկայն անհետանում է: Այսպէս կարփեցի կինը մինչև անգամ սատանաներին է խափում:

Պ.

Ուզտնկար գիւղում Դորգնանց պապը մի անդամ օջախի մօտ նստած միջոցին տեսնում է, որ մի քանի սատանաներ եկան ներս մտան: Խոկոյն վերցնում է խանձորը և տալիս սրանցից մինի զլլիսին: Սա վայր է ընկնում, իսկ միւսները փախչում են: Պապը սիրու է անում, որա մազերից մի քիչ կարում պահում: Մի քիչ յետոյ սատանան վեր է կենում, և էլ շի հեռանում, մնում է սրանց տանը: Սրանք դրան եօթը տարի ծառայեցնում են, միշտ հակառակ ձևով հրամայելով: Երբ եօթը տարին լրանում է, այս սատանան սաստիկ աղաշում է, որ իւր մազերը իրան տան, զնայ: Սրանք էլ տալիս են: Սատանան նորից է սկսում աղանձն, պաղատել, որ անից մի բան տան իրեն: Վերցնում մի բուռ մոխիր են տալիս նրան: Սատանան անհետանում է, բայց մինչև այժմ էլ սրանց տանը մոխիր շի մնում, սատանան հաւաքում, տանում է:

Պ.

Իգահատցի Արագ որսորդը պատմում էր. «Օրպէս աշխարհին յայնի է», երիտասարդ ժամանակս ես որսորդութիւն էի անում և «բալորը զիտեն», որ իմ գնդակը գետին չէր ընկնիլ: Քանի քանի լեզզիներ ենք քոթկաթաղ արել Հասան խանի տարուց առաջ... չա, այն էի տառմ, որ մի անդամ մինակ զնացի որսի, մի անտառի մէջ մութը վրայ հասնելով կրակ վառեցի և սկսեցի սպանածս եղնիկի մսից խորված անել: Հրացանս կոպքիս զրած էր: Ցանկարծ տեսնում եմ անտառի խորրից մի մարդ ելաւ, եկաւ նստեց իմ հանդէպ և ինքն էլ սկսեց խորոված անել: Խօսում եմ, շի խօսում, հարցեր եմ տալիս՝ շի պատասխանում, անձգակոթ եմ վեր առնում, որ զլլին տամ, նա էլ նոյնն է անում: Կարծելով, որ անտառում մոլորուած մի լեզզի է, վերցրի հրացանս և դրա կրծքին տուի: Հրացանիս ձայնի հետ տեսնեմ մի սոսկալի ոլր ընկառ և ամբողջ անտառը լցուեց, Հրացանս ձեռ-

քիցս խլեցին՝ քարերով տուին, ինձ քաշ ածեցին ու տուր թէ կըտաս. Հասկանալով, որ սատանաների ճանկն եմ ընկել, ոկսեցի հայր մեր ասել, ծօթն անգամ ասել էի, երբ ինչպէս որ մարդ քնից կը զարթի, այնպէս յանկարծ զարթեցայ, տեսնեմ շորս բոլորս ոչինչ չը կայ, կրակը առջևո վառվում է, խորովածո այրուել էր, հրացանո էլ կողքիս դրած...

Ե.

Մի օձնեցի պատմում էր. Մի տարի երիտասարդ ժամանակս Արտաժանու զոմերում (ձմերանոց) տաւար էի պահում. երեկոյեան դէմ զուռնա դնոլի ձայն լսեցի, կտրծեցի. թէ հարս ին տանում. Մթնեց, տաւարը ներս էի արել ու կրակի կողքին նստել, տեսնեմ զուռնա դնոլը եկաւ զոմի զուռը. Դուրս ելայ, ինչ տեսնեմ. բոլորովին լոյս է, և զուռնաշիք, անքաւ հարսննորք, և հարս ու թագաւոր զոմի դռանը ուրախութիւն են անում, պարում. Ինձ էլ առաջարկնեցին պարել, ու հանոներն առած տարան: Բաւական դնալուց յիտոյ, յանկարծ տրեխս ստիցս գուրս եկաւ, նոտայ շինելու. Մի քանիսն ինձ շոտապեցնելով հարցրին, թէ ինչի նոտայ, ևս բացատրեցի նրանց, թէ տրեխներս խոզի բարակ կաշուց լինելով քրրուեցան և սորիցս գուրս ելան, ուզում եմ ամրացնել, խոզի անունը բերնիցս գուրս ելնելուն պէս՝ էլ հարսանիք, հարսնեոր անյայտացան աշքիցս. աշխարհը մթնեց և ես ինձ տեսնում եմ զոմերից կէս օրուայ ճանապարհ հնուռ մի անտարի մէջ վար ընկած. իսկոյն երեսս խաչակնեռում եմ հականալով բանի էութիւնը և մինչև լուսարաց հաղիւ վերադառնում զոմերը.

Զ.

Օձունում Օսանք, Արգուիում Դաւիթ քեօխվանք, Ճանալիում Քոշնանց Քոշարը նկատել են, որ իրենց զոմերում ձիերը գիշերները սաստիկ քրանում են և մազերը հիւսուած են լինում. կուպր են քսում ձիերին և բանում մի մի սատանայ հօթական տարի աշխատեցնում, յիտոյ արձակում. Արանք հեռանալիս մի բան էին խնդրել իրը վարձ իրենց եօթն տա-

բուայ ծառայութեան, սրանք էլ մի մի բօւռ մօխիք են տուել, այս պատճառով էլ սրանց տներում երբէք մօխիք չի մը-նում, սատահաները հաւաքում, տանում են»:

Մի նայնանման գիպքից յետոյ Սրդուիեցի Օյժաբանք զուր են տուել, և մինչև այժմ էլ սրանց տանը ջուրը բարա-քեաթ չունի, սրբան էլ բերեն, մի քիչ յետոյ շրանսւմ է:

Խոկ Շխող գիւղում, Ծաժիննենց տանը գդալ երբէք չէր մնում. մի օր տեսնում են, որ մի կին եկաւ և գղաները հաւաքեց, ուզում է տանիք: Տան տղամարդը սրտոտ է լինում, վրայ է վաղում, մի հատ խփում վայր ձզում կնոջը, թէ այդ հոր ես տանում մեր գդալներ:

— Ձեր պապը այդ մնդ է տուել, պատասխանում է կինը և անյայտանում:

Նոր հարց ու փորձ են անում, իմանում, որ իրենց պապն էլ մի սատանայ է բռնած եղել, եօթը տարի աշխա-տացրել և վերջը մի գդալ նուիրել:

Է.

Երկու մարդ միմնանց գանդատում էին, թէ որքան ա-նում են, չեն կարողանում կրակ վառել: Սրանց խօսակցու-թիւնը լսում են երկու սատանայ և որանց վրայ ծիծաղելով միմնանց առում: «Ազա խող շախմախը բարին տան, կը տես-նեն ոնց է վառվում»: Մարդիկ լսում են սրանց ասածը և իսկոյն գնում փորձում, կրակ ստանում: Երբ բոցը բարձրա-նում է, նոյն սատանաները գալիս են սրանց մօտ և հարցը-նում, թէ այդ ո՞վ ձեզ սովորեցրեց կրակ հանել:

— Այդ մննք վաղուց զիտէինք, պատասխանեցին այս մարդիկը:

Ը

Երբ առաջին անգամ ձիթահանք շինեցին, իսկոյն շը կարողացան ձէիմ հանել. շղիտէին ինչպէս տնէին: Այս ժա-մանակ սատանան եկաւ նրանց մօտ և խոստացաւ սովորաց-նել ձէիմ հանելու կերպը, եթէ որ իրեն էլ մտս տան: Մար-դիկ չհամաձայնուեցան և շարունակեցին փորձեր անել, բայց

անօգուտ։ Մի օր էլ երբ սատանան ներս մտաւ միննոյն առաջարկը անելու, ձիթահանքի տէրը տաք ջուր ուզեց։ Սատանան այս լոելով՝ բացականչեց։ Ի՞նչ, զտաք զաղանիրը, տաք ջուրը կիմաւատի վրայ պիտի ածէր։

—Եյ՛, պատասխանից տէրը, վագուց արդին գտել ենք գաղտնիրը և կարիք չունենք քեզ մաս տալու։

Եւ հէնց որ սատանան ամօթահար հեռացաւ, տէրը փորձեց սատանի ասածը և հիմնալի ձեթ ստացաւ։

Թ.

Կլեկչին ամաննիրը մարդում է և կամենում է կլայեկել, սակայն չի իմանում, թէ կլայեկը ինչնի քու։ Երկար, զուր ջանքեր թափելուց յետոյ, կլեկչին կողպում է խանութն ու զնում։ Սատանան պատահում է նրան և հարցնում։

—Կլեկեցիր ամանները։

—Կլեկեցի, պատասխանում է կլեկչին։

—Թէ Բնչով, բամբակնով, կրկին հարց է տալիս սատանան։

—Հա՛, բամբակով, պատասխանում է կլեկչին, յետ դառնում, դրանով փորձում, տեսնում է կլայեկուեց։

Զօրի իսան. (զօրի մարդ). Մրանք ապրում են զետերի, լճերի և ծովերի մէջ. կիսից բարձր մարդու մարմնով և զըլիսով. իսկ ներքս ձկի մարմնով և պոշով են լինում։ Տկան թեսերի տակ լինում են մարդկային երկու ձեռք, բայց ոչ ոտներ. Երկու սեռի են լինում, շատ խաստուն, կերպակրուում են ընդհանրապէս աւագով, երբեմն լլ խեղգուած մարդկանց զիակներով. և այս պատճառով շատ անգամ աշխատում են նաւեր խորտակել, որպէսզի լաւ ճաշ ունենան։

Քաւթառ քոսի. Օձնեցի Մայրանը մազմազոտ, ծըլժըլուտ (ծալ ծալ մազերավ) մորթի՝ խորխ՝ ունէր, երբ հագնում էր՝ զառնում էր քաւթառ քոսի, էլ նրան ոչ մարդ էր տեսնում և ոչ շուն հաջում վերան։ Գիշերները զնում էր օրօրցներից երեխաններին հանում տանում Օձննի ձորի քաւթառ քոսի էրում (այր) ուտում։ Օձնեցիները իմացան, ոկնեցին սաստիկ հալածել, թողեց զաղթեց թաղագեղ, ուր և մեռաւ։